գորգերու գլխաւոր տեսակներն են՝ ռուսական, պարսկական, ափղանական եւ անատոլական գաւառներէն։ Ռուսաստան կը մատակարարէ Շիրվանի, Սէճճատէի, Ղիբէի, Հին Պաքուի, Գարապաղի, Սումաքի, Գաղագի եւ Ցէրպէնդի գորգեր։ Պարսկաստան կը մատակարարէ Սէճճատէի եւ Ֆէրահանի գորգեր, որ շատ կը ծախուին։ Խորասանի գորգերն աւելի Կ. Պոլիս կը գործածուին եւ շատ քիչ կ՚արտածուին։ Վերջին ժամանակներս Հէրէզ անուն պարսկական նոր գործուածներն շատ կը փնտռուին եւ Ֆէրահանի գորգերու հետ կը մրցին։ Պելուճիստանէն կու գան հին պարսկական գորգեր։ Թուրքիա կը մատակարարէ Սէճճատէ գորգն։ Տաճկաստան կը մատակարարէ Կիլիմ, Սէճճատէ՝ արկղի համար եւ Զմիւռնիոյ գորգ։ Ամէն տարի Կ. Պոլսէն գրեթէ 160.000 գորգ կ՚ելլէ բոլոր տեսակներն ի միասին, որուն գինն է իբր 250.000 տաճկական ոսկի։ Գլխաւոր գնողներն են՝ Անգղիա եւ Ամերիկա, որոնք տարին գրեթէ 150.000 լիրայի ապրանք կ՚առնուն։ Ասոնց կը յաջորդեն Աւստրիա եւ Գերմանիա (գրեթէ 50.000 լիրայի), եւ ետքն Գաղղիա եւ Իտալիա։ Ֆէրահանի, Խորասանի, Հէրիս եւ Զմիւռնական գորգերն չափերով կը ծախուին, իսկ մնացեալք մեծաւ մասամբ հատով։

## ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻՈՅ ԸՆԴ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

Անգղիոյ վաճառականութեան ատենին նախագահը անցեալ տարի Յունիս 8ին ի Կոստանդնուպոլիս գումարուած ընդհանուր ժողովոյն մէջ ճառ մը խօսեցաւ, յորում Անգղիոյ՝ Տաճկաստանի մէջ ունեցած վաճառականութեան արդեանց վրայ իւր տժգոհութիւնը յայտնեց։ Անգղիոյ Տաճկաստանի հետ ունեցած վաճառականութիւնն, ըստ նախագահը, վիճակագրական արձանագրութեանց նայելով՝ օր ըստ օրէ ետ կ՚երթայ, մինչդեռ մեր ախոյեաններն՝ Աւստրիա, Գերմանիա եւ Գաղղիա կը յառաջանան։ Ասոր պատճառն է գերմանացի վաճառականաց աշխոյժ գործունէութիւնը, վաճառականութեան համար ճանապարհորդութիւն ընողներու եւ գործակատարաց լաւագոյն դրութեան մը հետեւիլն, համեմատաբար վաճառաց աժանութիւնը, եւ վերջապէս գերմանացի վաճառականին ապահովութիւնը, թէ կրնայ ի հարկաւորութեան իւր տէրութենէն օգնութիւն գտնել։ Ասոր վրայ անմիջապէս աւելցուց՝ թէ նորերս Անգղիոյ խորհրդարանոյէն նաւատորմիղն զօրացընելու նպատակաւ որոշեալ փոխառութիւնն Անգղիայի ազդեցութեան աճելուն շատ օգնեց։ Վաճառականական սենեակն անցեալ տարի խնդրած էր՝ որ Անգղիա միայն վաճառականութեան համար դեսպան մ՚ունենայ։ Բուլական ժամանակէ ի վեր սոյն դեսպանութեան պաշտօնն վարած էր Պր. Լէվ՝ որ Բեդերապուրկ կը գտնուի։ Սակայն իւր իշխանութեան սահմանն մէջը Տաճկաստանն, Պարսկաստանն ու Ռուսաստանը բովանդակելով՝ շատ ընդարձակ է, ուստի նախագահը կը բաղձայ՝ որ Տաճկաստան առանձին դեսպան մ՚ունենայ։ Անգղիոյ Արեւելեան Րումէլիի հետ ունեցած վաճառականութիւնն շատ գէշ վիճակի մէջ է. Տաճկական պետութեան սահմաններու վրայ կանգնած մաքսատներն ամենեւին օգուտ չունեցան եւ գրեթէ չեն գործածուիր։ Անգղիոյ անկարելի է այս կողմերս մրցութիւն ընել, վասն զի ինք ստիպուած է առ հարիւր 16 մաքս վճարել, մինչդեռ Աւստրիա եւ Գերմանիա՝ առ հարիւր 8 միայն կը վճարեն։ Սակայն յոյս կայ որ Խամպոլի-Պուրկազի երկաթուղւոյն գիծը շուտով լմննալով՝ անգղիական վաճառքներն ալ սովորական մաքսով ներմուծուին։ Բայց Պուրկազի վրայէն վաճառքներն փոխադրելը հարկ է որ միշտ ուղղ ըլլայ։ Կոստանդնուպոլիս Պալքանի վաճառականութեան կեդրոնն ըլլալով՝ պէտք է որ Անգղիա ջանայ Կոստանդնուպոլսոյ մենավաճառութիւնն իւր օգտին համար կանգուն պահել։ Հուսկ ուրեմն նախագահն Արեւելեան շոգեկառայ խնդիրը շօշափելով՝ ըսաւ. Եթէ Անգղիա իւր ազդեցութեամբ չջանայ լուծել այս խնդիրն ի նպաստ իւր վաճառաց փոխադրութեան՝ ընդդէմ գերմանական եւ աւստրիական երթեւեկութեան դիւրութեան, անկարելի է մեծաւ մասամբ չկորսնցընել Ռումանիոյ, Պուլկարիոյ եւ Տաճկաստանի մէջ ունեցած վաճառականութիւնը։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԼՈՒՐՔ

Վաճառականութիւն Ռուսիոյ Պարսկաստանի հետ։ Մոսկուայի վաճառականք աղերսագիր մատուցեր են ռուս կառավարութեան՝ որ միջամտութիւն ընէ պարսկական մաքսային դրութիւնը կարգաւորելու։ Վասն զի բովանդակ Պարսկաստանի մաքսն առանձնականաց վարձու կը տրուի, որոնք կ՚որոշեն վճարելի մաքսասակը։ Պարսկական ընդհանուր օրէնք է՝ որ վաճառքէն հինգ առ հարիւր միայն մաքս կ՚առնուի, բայց առանձնական մաքսատեարք երբեմն ութ մինչեւ տասն առ հարիւր կ՚առնուն։ Ասով շատ դժուարցած է վաճառականութիւնը, այնու մանաւանդ որ արդէն սկսած է Պարսկաստանի մէջ այլեւայլ ազգաց վաճառականութեան մրցումը։

Փերեզլովսկեան եւ կոստրոմայեան մենաշնորհ ի Ռուսաստան։ Մոսկուա կազմուած է նոր բաժանորդագրական ընկերութիւն մը, որուն նպատակն է բովանդակ Ռուսաստանի մէջ փերեզակեղինաց վաճառականութիւն ընել։ Բաց ի մայր մթերանոցէն ի Մոսկուա, գաւառներու քաղաքաց մէջ ալ ճիւղեր պիտի ունենայ ընկերութիւնը։ Կը կարծուի թէ ընկերութեան բուն

նպատակն ըլլայ փերեզակեղենաց եւ կտաւեղէնաց մենավաճառութիւն մը հաստատել։ Ընկերութեան կանոնագիրն արդէն քննութեան տրուած է ելեւմտից պաշտօնարանին։

**Աշնանագործութիւն ի Ռուսաստան**։ Աշնանագործութեան ռուս ընկերութիւնը Լիսիչանսկի քով աշնանագործարան հիմնած է, որ իւր միլիոն պուտ աշնան պիտի պատրաստէ։ Ընկերութեան քարայղի հանքը (Եկատերինոսլաւ, Բախմուտ) գաղղիական ընկերութեան մը ձեռքն է, որ յանձն առած է ընկերութեան պէտք եղած աղը տալ։

**Ռուսաստանի ծխախոտի արդիւնքը**։ Պաշտօնական տեղեկութեանց համեմատ բովանդակ Ռուսաստանի մէջ 6600 ha տարածութեամբ արտորայք կան, որոնք 84 միլիոն քիլոկրամ ծխախոտ յառաջ կը բերեն՝ 40 միլիոն մանէթի արժողութեամբ։

**Ռուսական քոմէր**։ Երկու օտարազգի ընկերութիւն առաջարկեցին ռուս տէրութեան որ Թուրքաստանի արծաթի եւ կապարի հանքերը շահագործեն։ Երկրաչափ մը նաեւ քարածուխ գտած է Եկատերինոսլաւի նահանգին մէջ։

**Կաշի գործարանք Ռուսաստանի**։ Կայսերական արուեստագիտական ընկերութեան տեղեկագրոյն համեմատ՝ 210 կաշագործարանք կան բովանդակ Ռուսաստանի մէջ, որոնցմէ 30 մեծամեծ գործարանք քաղաքներու լուսաւորութեան համար են, 157 հատ գործատանց մէջ եւ 23 հատ շոգեկառաց կայարաններու համար։ Քիեւ եւ Խարքով նաւթակազ կը գործածեն։

**Ռուսիոյ վարդենիքը**։ Կաւկասի Քութայիս գաւառին մէջ սկսուած է վարդիւղ պատրաստուիլ։ Պաքուի մէջ փորձուեցաւ վարդ մշակել, որ շատ յաջող եղաւ։ Նոյն յաջողութիւնը կը սպասուի Քութայիսի մէջ ալ։ Խրիմ ալ լերանց վրայ անհամար հարիւրտերեւուկ վարդ կը բուսնի վայրենի, ուստի հոս ալ սկսած են մտադիր ըլլալ այս բերքին։

**Մարգարիտ Սէյլոնի**։ Անցեալ տարի շատ յաջող եղաւ խեցորսութիւնը։ Քսանուերկու օրուան մէջ 50 սուզակ 11,000.000 խեցի որսացեր են, որոնց 1000 հատը 24 շիլլինկի կը ծախէին։ Տէրութեան մասն եղաւ 20.000 անգղիական ոսկի եւ սուզակները շահեցան 6400 ոսկի անգղիական։ Սէյլոնի մէջ ամենամեծ մարգարիտը 40—60 անգղ. ոսկի կ'արժէ, իսկ Եւրոպա երեքպատիկ եւ աւելի ալ։

**Նորութիւն մը Դրոշմագրութեան**։ Նամակադրոշմ հնարելէն ի վեր շատ մը խաբէութիւնք եղած են թէ առանձնականներէն եւ թէ պաշտօնեաներէն, որոնք նամակադրոշմը նամակներու վրայէն կ'առնուն, եւ նամակն իսկ շատ անգամ կ'ոչնչացընեն։ Այս չարեաց իբր դարման՝ կը խորհի Աւստրիոյ վաճառականութեան պաշտօնատունը նոր նամակածածկեր յօրինել վրան նամակադրոշմ տպուած, սովորական նամակադրոշմի գնով, այնպէս ինչպէս արդէն կը գործածուէր երկեւմտից պաշտօնարանին մէջ առեւտրական հաշուեգրոց համար։ Անշուշտ ուրիշ տէրութիւնք ալ պիտի հետեւին աս նորութեան։

**Ռուսաստանի շահաբեր արդիւնքները**։ Ռէվալի հիւպատոսն իւր տարեկան տեղեկագրոց մէջ հետեւեալը կը գրէ։ Արդեւլիչ մաքսերն շատ սուղ ըլլալուն՝ ինչ ինչ արուեստական ճիւղեր յուսացուած շահն չունեցան, ոմանք ալ կամ իրենց առատութեան պատճառաւ, — ինչպէս ոգին ու ճակնդեղի շաքարը, — եւ կամ ճանապարհաց պակասութենէն չկրնալով շոգեկառաց հետ հաղորդակցուիլ — ինչպէս քարածուխն, — լաւ վիճակի մէջ չեն։ Սակայն կան այնպիսիներ ալ, որոնց արդիւնքն շատ յաջող եղած է, ինչպէս որ յայտնի է տարեկան յայտարարութիւններէ՝ որոնց հաշուեկշիռն արդէն հրատարակուած է։ Այս կարգէ են.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Thorntonի բրդեղինաց գործատունն ի Պետերբուրգ | առ. | հարիւր | 45 | զուտ | շահ։ |
| Krähnholmի տարազագործարանն | „ | „ | 44·9 | „ | „ |
| Newskiի բամբակեղինաց մանարանն ի Պետերբուրգ | „ | „ | 38 | „ | „ |
| Nikolskiի տարազագործարանն | „ | „ | 28 | „ | „ |
| Խամպլէյեան մանարանն | „ | „ | 26 | „ | „ |
| Rabeneckի բամբակեղինաց մանարանն | „ | „ | 25·4 | „ | „ |
| Katharinenhofի բամբակեղինաց մանարանն | „ | „ | 23 | „ | „ |
| Սամսոնեան մանարանն ի Պետերբուրգ | „ | „ | 21 | „ | „ |
| Կտաւի մանարանն ի Նարուա | „ | „ | 18 | „ | „ |
| Թառնթոնեան տարազագործարանն | „ | „ | 16 | „ | „ |
| Ռուսական գործատունն բամբակեղինաց ի Պետերբուրգ | „ | „ | 15 | „ | „ |

Սակայն հոս հարկ է միանգամայն յիշել՝ որ զուտ շահը շատ աւելի է, վասն զի պաժման ծախքերով գործատանց ապագայ ընդարձակման ալ խնամք տարուած է, այնպէս որ Nikolskiի տարազագործարանն արդեամբ 40% զուտ շահ ունեցած է. այսպէս նաեւ միւս գործատունք։ Ընդ հակառակն լեհ գործատեարք հազիւ 7—9% զուտ շահ ունեցած են, բայց ռուս գործատեարք չեն դադրիր տակաւին ըսելէ՝ թէ չեն կրնար դիմանալ լեհ-ռուս գործատեարց մրցմանց դէմ։

digitised by A.R.A.R.@